

Thompson. Mrs. S. A. Lyman

Sept. 1895

Ex. 1937

891.995

p-95

Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ

30 MAY 2011



Զարի

վերգը



ՆԱԿՆԵՐԸ
ԱՆ.ԳԱՅՈՒՆՅԱՆ

ՄԵՏՆՐԱՏ

1997

ՅԵՐԵՎԱՆ

23 APR 2013

9093

891.995

1995

ur

1/10/1



690
37




Հինում ե մի սար,
են սարում մի ծառ,
են ծառում փրչակ,
փրչակում մի բուն,
բընում յերեք ձագ,
Ու վըրեն կըկուն:

— Կոկիւ, կոկիւ, իմ կուկուներ,
Յերբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչեք, գընաք,
Ուրախանաք...
Յերգում եր մարիկ կըկուն.
Մին եր, ընը՝ Աղվեսն յեկավ.



—Ես սարը իմն ե,
Ես ծառը իմն ե,
Ծառում փրչակ կա,
Փրչակում՝ մի բուն,
Ես ով ե յեկել
Տիրացել թագուն:

Ախ, դու կրկու, հիմար կրկու,
Քանի՜ փոքրիկ ձագ ունես դու:
—Յերեք հատ ձագ, աղա Աղվես:
—Յերեք հատ ձագ ցույց կը տամ քեզ.
Ու չէս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա ղրրկես ինձ մոտ:



Ձրգի շուտով մի հատը ցած,
Թե չե կացինս՝ հրրեն սըրած,

Գրնամ բերեմ,
Ծառը կըտրեմ...

— Վայ, չը կտրես,
Աստված սիրես,
Ես մինն ահա

Տար քեզ ծառա,
Միայն թե եղպես

Մի ջընջիլ մեզ
Բընով—տեղով,

Ամբողջ ցեղով:

Ոնդրեց մարիկ Կըկուն ու ձագերից մինը
ձրգեց ներքև: Աղվեսը հափ, առավ գնաց:

— Վայ—վայ, դու-դո՛ւ,
Իմ լավ կուկու.

Վո՛ր սև սարում,

Վո՛ր անտառում,

Վո՛ր թրիի տակ

Կորար մենակ...

Վայ—վայ, դու-դո՛ւ,

Իմ խեղճ կուկու...

— Կաց եր լինում մարիկ Կըկուն, մին ել, ըհ՛ը,

Աղվեսը յետ յեկավ:

— Ես սարը իմն ե,

Ես ծառը իմն ե,



Ծառում փրչակ կա,
Փրչակում մի բուն,
Ես ո՞վ ե յեկել
Տիրացել թագուն:

Ախ, դու Կըկու, հիմար Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու,
— Յերկու հատ ձագ, աղա Աղվես:
— Յերկու հատ ձագ ցույց կը տամ քեզ:
Ախ, չարամիտ դու ավագակ,
Ի՞նչ խաբար ե յերկո՛ւ հատ ձագ:
Ի՞նչ, ուզում ես եստեղ գոռով
Լըցնես ամբողջ կըկուններով...


Զրգի շուտով մի հատը ցած,
 Թե չե կացինս հըրեն սըրած,
 Կնամ բերեմ,
 Ծառը կըտրեմ...
 —Վայ, չըկտրես,
 Աստված սիրես,
 Ես ել առ տար,
 Ու թող դադար,
 Վերջինը գեթ
 Մընա ինձ հետ...


Աղաչեց մարիկ Կրկուն ու յերկրորդ ձագն ել
 ձգեց ներքև: Աղվեսը, հափ, ես ել առավ ու գնաց:
 —Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ:
 Ընչի համար
 Յեկա ես սար,



Բուն շինեցի,
 Զագ հանեցի...
 Աղվեսն յեկավ,
 Տարավ կերավ,
 Յերկու, յերկու,
 Կուկու... կուկու...

Հաց եր լինում մարիկ Կրկուն:
 Ես միջոցին — դա՛, դա՛, դա՛, Ազոափն անց եր
 կենում են կողմերով: Լըսեց Կրկունի լացի ձայնը:
 — Եղպես տխուր ու զարհուրիկ
 Ի՞նչ ես լալիս, Կկու քուրիկ:
 — Ինչպես չը լամ, ա՛ սանամեր.
 Աղվեսն յեկավ են սըրտամեռ,





Գրլիխ եսպես փորձանք բերավ,
 Զագուկները տարավ, կերավ:
 —Վնւյ, իմ աչքին, անխելք Կրկու,
 Ինչպես իզուր խաբւել ես դու
 Սուտ խոսքերից չար Աղվեսի:
 Վննց թե սարն իմն ե՛կասի:
 Ո՞վ ե տըվել են լըրբին սար.
 Սարն ամենքիս ե հավասար...
 Ո՞վ կը թողնի վեր կենա նա
 Ամբողջ սարին գա տիրանա,
 Անուշը տա սրբած կացնի,
 Սրան, նրան սուտ վախեցնի,
 Ու մինն ետոր, մյուսը յերեկ,
 Զագեր տանի, ուտի մեկ-մեկ...
 Սև գրողի են տարածին
 Ո՞վ ե տվել սրբած կացին:
 Մին ել վոր գա ու սպառնա,
 Մի վախենա քրշի գնա:
 Եսպես ասով Ագոավն ու թռավ գրնաց:
 Սհա կրկին Աղվեսն յեկավ:
 —Ես սար իմն ե,
 Ես ծառ իմն ե...
 Հագիվ եր ասել, Կրկուն բնից զլուխը հանեց՝
 —Սուտ ես ասում, դու խաբերան,
 Անխիղճ գազան, անկուշտ, ագահ:
 Ո՞վ ե տվել եստեղ քեզ սար,
 Սարն ամենքիս ե հավասար:



Խնչ ես յեկել սուտ տեր դարձել,
 Յես ել հիմար՝ ճիշտ եմ կարծել,
 Զագուկներըս տրվել եմ քեզ...
 Կորի, գընա, գու չար Աղվես,
 Հերիք ինչքան սուտ ես ասել,
 Հիմի գիտեմ, չեմ վախում ել.
 Կացին չունես ծառը կըտրես:
 — Ո՞վ ասավ քեզ,
 — Ագռավն ասավ:
 — Ագռավը. լավ:

Ու ագռավի վրա բարկացած Աղվեսը պոչը
 քաշեց, հեռացավ. Գընաց մի դաշտում սուտ մեռ-
 նուկի տվավ, վեր ընկավ, իբրև թե սատկել է.
 Ագռավն ել կարծեց, իրավ սատկել է. թռավ, յե-
 կավ, վրեն իջավ, փոր աչքերը հանի:

Աղվեսը, հափ, հանկարծ բռնեց:

— Ղան-ղան, ղան-ղան,

Աղվես աղա...

— Այ դու կռավան չարալեզու,
 Վոնց թե կըկուին ասել ես դու,
 Թե յես կացին չունեմ սըրած...
 Կացին չունեմ... դե հիմի կաց...

— Վան, քեզ մեղա,

Աղվես աղա,

Յես եմ ասել, չեմ ուրանում,
 Ինձ քըրքըրիր, ինձ կեր հում-հում,

Տուր, ինչ պատիժ սիրտըդ կուզի,
 Բայց մի վերջին խոսքըս լռի:
 Յես եմ սարում, հենց դեմ ու դեմ,
 Ենպես մի թանգ պահուստ ունեմ:
 Վոր չես գրտնի դու քո որում
 Վոչ մի թառում կամ անտառում:
 Ընչի համար եմ ահազին
 Գանձը կորչի հողի տակին:



Արի գրնանք, հանեմ տամ քեզ,
 Ենքան ուտես, ենքան ուտես...
 Թե չը լինի ու սուտ դուրս գամ,
 Յես հո եստեղ միշտ կամ ու կամ...

— Գնանք, ասավ Աղվեսը: Թե կը լինի շատ լավ,
 Թե չի լինի ելի քեզ կուտեմ:

Գնացին:

Վերևից թռչելիս Ագռավը նկատել էր, վոր
 մի թփում պառկած էր գյուղացու շունը: Աղվե-
 սին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ են թփի
 վրա:

— Ա՛յ, ասեց. ես թփումս ե իմ պահուստը: Աղ-
 վեսն ազահ վրա ընկավ թփին. շունը վեր թռավ,
 կոկորդից բռնեց ու դրեց տակին:

Աղվեսը խեղդվելով սկսեց խոխոալ.

— Ա՛խ, յես... ա՛խ, յես...

Զգույշ Աղվես,

Փորձանքի մեջ

Ընկնես եսպես...

Ա՛խ, անիրավ

Դու սև Ագռավ...

— Ինչքան ել վոր լինիս զգույշ
 Չարի համար թե վաղ, թե ուշ,
 Եղ ե պահված, Աղվես աղա.

Ղան, ղան, ղան, ղան...

Պատասխանեց Ագռավն ու թռավ:



Պատ. խմբագիր՝ Նվ. Թումանյան
 Տեխ. խմբագիր՝ Ս. Դասպարյան
 Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Դավիթի լիպոն Կ—4620 Հրատ՝ 4103
 Պատկեր 378, Տիւրա՝ 4000
 Պիտերաթի սպարան, Յերեւան, Լեւոնի, 65


ՀՀ Ազգային գրադարան



NL0400340

864

ԳԻՆԸ 1 Ռ. 90 Կ.



ՕՎ. ԿՈՇԵԾԻԱՆ

ԿՈՇԵԾԻԱՆ

ԳԻՆ Արմ. ՍՍՐ, Երևան, 1987 թ.

5

9093